# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

26 ՀՈՒՆԻՍԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Արտյոմ Ազիզյանը, Լարիսա Արտաշեսյանը, Լեվոն Խաչատրյանը, Եղիազար Հարությունյանը, Նարեկ Հարությունյանը, Սարգիս Ղազարյանը, Գոռ Սաֆարյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Միհրան Մելքումյան, Գոռ Մկրտչյան, Էդիկ Բաբախանյան, Պապին Վարդանյան, Սամվել Գարսեվանյան, Նելլի Աբազյան, Հասմիկ Մելքումյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը**

**Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի օգնական՝ Մարոզ Սարիբեկյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/***

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի14-րդ հոդվածի 6-րդ մասի,62-րդ հոդվածի,համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2024թվականի չորրորդ նստաշրջանի հունիսի 26-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը.
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին
2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 83-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին
4.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և համայնքի

սեփականություն ճանաչված գույքը օտարելու մասին
5.Հողամասերը համայնքի սեփականություն ճանաչելու մասին

6.Համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի նիստ հրավիրելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՆԵԼԼԻ ԱԲԱՋՅԱՆ/***

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 83-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՁՈԲԱՆՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 83-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն «Հավելվածի»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ն/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/***

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին՝որոշում է՝

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշռին համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Լ/

Լսեցին

***ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ , ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության մայիսի 26-ի N 550-Ն որոշման,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
   1)աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի,
   2) ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի:
   2.Ինքնակամ շինությունների օրինականացման նպատակով համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարել ինքնակամ շինությունը կառուցողին և սահմանել վաճառքի գին համաձայն հավելված 3-ի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Լսեցին

***ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/***

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման հավելված 2-ի 39-րդ կետի 1-ին ենթակետը,Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թվականի հունիսի 1-ի թիվ 186 -Ն հրամանը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հողամասերը ճանաչել Ակունք համայնքի սեփականություն համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Լ/

Լսեցին

***ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/***

Համաձայն«Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 62-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի ավագանու հինգերորդ՝ աշնանային նստաշրջանի հերթական նիստը հրավիրել 2024 թվականի սեպտեմբերի 10-ին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Ավագանու անդամներ

ՄԱՐՋԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԱՔՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ_____

*Նիստն արձանագրեց՝* Մարոզ Սարիբեկյանը

_____